րել զգիւտս ինչ իմաստից և դպրութեան. իսկ աղքատաց հարկ լինէր զարծաթն կարծել գինք իմաստութեան, և առ 'ի չգոյէ նորին՝ մընալ 'ի խաւարն առաջին։ Այս և առաւել ևս. զաղքատս մեծացուցանելով ճշմարիտ մեծութեամբն՝ թափէին զնոսա 'ի բռնութենէ և 'ի ստրկութենէ մեծատանց, և մարտնչէին ընդ պայազատական շքոյն յօրանաց, յորմէ այնչափ աղէտք մտին և 'ի մերս. և յօտար աշխարհս։ Այլ 'ի վերայ այսորիկ զմեծատանցն ևս ճարտար փոյթ ունէին. զի ձեռն յաղքատս տուեալ՝ զմեծատունսն շարժէին սթափեցուցանէին երկեցուցանէին, գուցէ "Օտաայք իմաստունք տիրեսցեն տերանց անմտաց". բռնադատէին իմն զնոսա յօժարել տալ զարծաթ զեղծիչ ազնուութենէ իւրեանց և գնել զանկշռելի մեծութին. այնու և զմիաբանութեան հոգին տնկէին յազգին, կամ մտօք հաւասարեալ աղքատաց և մեծատանց, կամ 'ի դպրոցի միաբան քաղաքավարեալ և հաւասար օրինօք մնեալ՝ սիրել զհաւասարութիւն։

Այս սակս խոհական բարերարացն փոյթ եղև վարժարանս ազգային լեզուաւ կարգել. զի որպէս բազում չարեաց պատճառք լեզուն է, նոյն և բարւոյ ազգին և նորին սիրոյ աճելութեան։ Վասնզի օտար վարժապետք թէ շատ՝ խնամակալ ևեթ են աշակերտացն, իսկ ազգայինն հայր և դայեակ. նոքա ձեռամբ՝ սա սրտիւն ջամբէ. նոքա բազում այն է զի վարձկանք են ըստ Տեառն բանի, իսկ սա հովիւ ճշմարիտ՝ որ ոչ խնայէ յանձն վս հօտին սիրելոյ, և ոչ ինչ պակաս 'ի համօրէն հօտէն սրտաբեկ լինի ընդ զարտուղել և միոյ գառին։

Այլ մեծագոյն ևս բարիք բարերարացն իմաստութեան այս են, զի ընդ աղբերն գտին և զագուգայս դիպան 'ի հանապազագնաց յառաջատութի ջուրցն ամբարելոց. այսինքն են Սատարողքն իմաստութեան, ոստիկանք վարժարանաց, զորոց ահա բուռն հարկանեմ ճառել։

(ԱՒԱՐՏՆ ՑԱՌԱՋԻԿԱՑՍ։)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Երուսաղեմի սուրբ Յարութեան եկեղեցին։

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ սուրբ Յարութեան եկեղեցին խիստ մեծ ուխտատեղի է ամենայն քրիստոնէից. ասիկայ իրեք եկեղեցիէ ձեւացած է, սուրբ Յարութիւն, Գողգոթա և Խաչգիւտ։ Շէնքը խիստ հին է. այնչափ որ ոմանք կ'ըսեն թէ Տիտոսի Երուսաղեմը կործանելէն քառասունուվեց տարի ետքը քրիստոնեայք հրաման ուզեցին Ադրիանոս կայսրէն որ Քրիստոսի գերեզմանին վրայ եկեղեցի մը շինեն, կայսրն ալ հրաման տուաւ. ետքը սուրբ Հելինէ Կոստանդիանոսի մայրը ան եկեղեցին մեծցուց կ'ըսեն. բայց աւելի հաւանական կ'երևնայ թէ աս եկեղեցին սուրբ Հելինէ ինքը շինած ըլլայ։ Զարմանալին ան է որ այնչափ աւերմունքներէ ու պատերազմներէ ետքը ինչուան հիմա կարծես թէ իր առջի տեսքը պահած է. և թէպէտ աս դարուս սկիզբը կըրակէն այրեցաւ, բայց դարձեալ մեծ ջանքով շինեցին ճիշդ առջի ձեւովը։

Շ ատթոպրիան գաղղիացի երևելի մատենագիրը Երուսաղեմի կողմերը ճամբորդութիւն ըրած ըլլալով՝ այսպէս կը ստորագրէ աս եկեղեցին. "Սուրբ Յարութեան եկեղեցին անհարթ գետնի մը վրայ շինած է, կ'ըսէ, ու մէջը կանթեղներ ու ջահեր կը վառին միշտ, եկեղեցին ալ մթնկեկ ըլլալով՝ մարդուս ջերմեռանդութիւնը կը շարժէ։ Անանզան ազգաց քահանաները աս եկեղեցւոյս մէջ դաս դաս կեցած՝ զգուշացուած կը փառաբանեն. լատին

Երուսաղէմ Սուրբ Յարութեան եկեղեցին։

„ կրօնաւորներն իրենց երգեհոնը՝ Ե-
„ թովպասի քահանաներն ալ իրենց
„ նուագարանները ստէպ կը զարնեն.
„ մէկ դին կը լսես եկեղեցւոյն մէջ
„ յոյն կրօնաւորներուն անոյշ երգե-
„ ը, մէկալ դիէն Հայոց վարդապետ-
„ ներուն ժամերգութիւնը, ու ղփտի
„ կրօնաւորներուն ողբաձայն երգե-
„ ը, երբեմն առանձին՝ երբեմն ալ
„ ամէնը միկտեղ „։

Եկեղեցւոյն ձևը կլոր է. երկայ-
նութիւնը գրեթէ հարիւր քայլ է,
լայնքը վաթսուն. տեսքը շատ հոյա-
կապ ու փառաւոր։ Քրիստոսի սուրբ
Գերեզմանը եկեղեցւոյն մէջտեղն է՝
երկայնաձև քարաշէն շինուածքով մը
ծածկած. անոր մէջը կ'իջնան ուխ-
տաւորները երկու իրեք աստիճանով,
ու հոն երկրպագութիւն կ'ընեն սուրբ
գերեզմանին, որ ճերմակ մարմարիո-
նէ է՝ վեց ոտնաչափ երկայն ու իրեք
ոտնաչափ լայն. վրան ալ՝ գմբէթաձև
ծածքէն երեսունուեօթը հատ մեծա-
շէն ու թանկագին կանթեղներ կա-
խուած են որ գիշեր ու ցորեկ կը վա-
ռին. ասոնք Եւրոպայի այլեայլ թա-
գաւորաց ընծաներն են։ Հայց անոնց
մէ աւելի լուսաւոր կ'երևնայ քարե-
պաշտ ուխտաւորին ան ամէն ազգէ
հոն վազող քրիստոնէից աստուած-
պաշտութիւնն ու հաւատքը, որ ծուն-
կի վրայ եկած՝ կամ երեսի վրայ փը-
ռուած՝ իրենց արցունքովը կը լուա-
նան այսչափ դարերէ 'ի վեր Քրիստո-
սի փրկչին մերոյ սուրբ գերեզմանը,
և ինչպէս որ Քրիստոս ան գերեզմա-
նէն յարեաւ փառաւորապէս, այնպէս
ալ իրենք կը յուսան օր մը իրենց
գերեզմանէն յարութիւն առնելու փա-
ռաւորապէս ու իրենց փրկչին աջա-
կողմը դասաւորուելու։

ԱՐՏԱՍՈՒՔ անգամ ապաշխարութեան առաւելագոյն ունին քաջալերութիւն քան զմեզն որ քամ զնոսին յաչաց։ Ի սիրտ ճշմարիտ քրիստոնէին հանապազորդ խրախճանութիւն է։